ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-4/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 14.10.2019թ.
ժամը 12 ⁰⁰

Մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ (ԳԱՊ)
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան,
Գնահատողներ՝
- ՀՀ ՋՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության հաշվառման բաժնի պետ, գնդապետ Ս. Պետրոսյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման գնման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան,
- ՀՀ ՋՈՒ ՍՎ ԱՏ ծառայության շահագործման և պլանավորման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Դ. Սերոբյան,
Գնումները համակարգող՝
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի տեղակալ Ա. Բաղրամյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1. Մասնակիցների՝ հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող **«Արպանիվ» ՍՊԸ**-ի կողմից ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են և համապատասխանում են բաց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, իսկ **Ա/Ձ Թեմուր Գալստյանի** կողմից ներկայացված հրավերով պահանջվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացվել են թերի, մասնավորապես՝ տեխնիկական բնութագրում նշված չեն անվադողի սահմանելի արագության ինդեքսի/կմ/ժ/, անվադողի բեռնվածության ինդեքսի, անվադողի բեռնվածության /կգ/ մասին հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող պարտադիր տեղեկությունները:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը երեք աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

21.10.2019թ գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները

Սահմանված ժամկետում **Ա/Ձ Թեմուր Գալստյանի** կողմից ներկայացվեց անհամապատասխանության շտկված տարբերակը, որը ընդունվեց գնահատող հանձնաժողովի կողմից:

1.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 21.10.2019թ., հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց **«Արպանիվ» ՍՊԸ** -ն՝ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 12, 13, 14, 15, 16, 17 և 18-րդ չափաբաժինների մասով, **Ա/Ձ Թեմուր Գալստյան՝** 11-րդ չափաբաժնի մասով ճանանչել ընտրված /հաղթող/ մասնակիցներ և անգործության ժամկետի ավարտից հետո նրանց պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Բաղրամյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-4/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ քան գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Հ. Կարապետյան
Գնահատող	Ս. Պետրոսյան
Գնահատող	Ա. Սիմոնյան
Գնահատող	Դ. Սերոբյան
Գնումները համակարգող՝	Ա. Բաղրամյան